

«ԴԱՍԱՎԱՆՂԻՐ, ՀԱՅԱՍՏԱՆ»-Ի ԵՎ «ԱՐՄԱԹ ԻՆՏԵՆՆԵՐԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ»-Ի ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

«Դասավանդի՛ր, Հայաստան»-ը առաջնորդական հմտությունների զարգացման ուղղվածությամբ կազմակերպություն է, որի նպատակը կրթության միջոցով սոցիալական փոփոխություններ բերելն է: Այդ նպատակի իրագործման համար մենք ունենք Ձեզ նման մարդկանց կարիքը: Մեզ պետք են Ձեզ նման նորարար գործիչներ, որոնց ստեղծագործ գաղափարների շնորհիվ մեր երկրի գյուղական համայնքների աշակերտների համար կբացվեն նոր հնարավորություններ:

«Դասավանդի՛ր, Հայաստան» հիմնադրամը համագործակցում է «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների հետ, որպեսզի Ուսուցիչ-առաջնորդները հնարավորություն ստանան երկրի ողջ տարածքում տարածել նորարարական գաղափարները: Դառնալով «Արմաթ»-ի և «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի Ուսուցիչ-առաջնորդ՝ Դուք ստանձնում եք ուսուցչության երկամյա առաքելություն որևէ գյուղական համայնքում: Եթե Ձեր տեղակայման համայնքի դպրոցում դեռևս առկա չէ «Արմաթ» լաբորատորիա, ապա Դուք կնպաստեք Ձեր աշակերտների համար տվյալ դպրոցում «Արմաթ» լաբորատորիայի ստեղծմանը: Որպես «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի և «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների Առաջնորդության զարգացման համատեղ ծրագրի մասնակից՝ Դուք ձեռք կբերեք մասնագիտական զարգացման բացառիկ հնարավորություններ:



Դիմելու համար խնդրում ենք լրացնել «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի Առաջնորդության ծրագրի մասնակցության հայտադիմումը՝ այցելելով հետևյալ հղումով՝ <https://arm.teachforarmenia.org/application2020>: Խնդրում ենք նաև ուղարկել մասնակցության ցանկության դիմում-նամակ info@armath.am էլ. հասցեով: «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի և «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների Առաջնորդության համատեղ ծրագրի առավելություններից օգտվելու համար անհրաժեշտ է հաջողությամբ անցնել երկու ծրագրերի հայտադիմումների ընտրության փուլը: Հավելյալ տեղեկությունների համար կարող եք էլեկտրոնային նամակ ուղարկել հետևյալ էլ. հասցեով՝ gor@teachforarmenia.org:

1-ին տարի

Յուրաքանչյուր տարի՝ կախված Ձեր տեղակայման համայնքից, «Դասավանդի՛ր, շայաստան»-ի կողմից Դուք կստանաք ամսական կրթաթոշակ՝ 130.000+ ՀՀ դրամի չափով*, ինչպես նաև ամսական լրացուցիչ 60.000+ ՀՀ դրամ՝ «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների կողմից, կախված դասաժամերից՝ ի լրումն այն դպրոցից ստացվող աշխատավարձի, որտեղ դասավանդելու եք:**

Ի հավելումն, «Դասավանդի՛ր, շայաստան»-ի Ուսուցիչ-առաջնորդների ակադեմիայի, տարածաշրջանային և համապետական ուսումնական հավաքների, ինչպես նաև «Կրթություն բոլորի համար» համաշխարհային ցանցի կողմից առաջարկվող ծրագրերի և Առաջնորդության զարգացման Ձեր ղեկավարի հետ աշխատանքների շնորհիվ, կունենաք առաջնորդական և մասնագիտական հմտությունների զարգացման հնարավորություն:

Ավելին, ծրագրի աջակիցները Ուսուցիչ-առաջնորդներին տրամադրում են անվճար հեռախոսներ և անլար ինտերնետային ծառայության փաթեթներ:

2-րդ տարի

«Արմաթ» ինժեներական լաբորատորիաների կողմից տրամադրվող ռեսուրսների եւ աջակցության շնորհիվ Դուք հնարավորություն կունենաք դիմելու «Դասավանդի՛ր, շայաստան» հիմնադրամի շամայնքային ազդեցության ֆինանսական մրցանակին: Դրա միջոցով կկարողանաք ֆինանսավորել այնպիսի նորարարական ծրագիր, որը կաջակցի տեղացիների նորարարական գաղափարի իրականացմանը և կամրայնդի քաղաքացիական պատասխանատվությունն ու համաշխարհային փոխկապակցվածությունը: Ֆինանսական աջակցությունը տատանվում է 500-ից մինչեւ 2,000 ԱՄՆ դոլարի սահմաններում՝ կախված Ձեր առաջարկած ծրագրի մաստշաբներից:

Դուք նաև հնարավորություն կունենաք դիմելու «Դասավանդի՛ր, շայաստան»-ի Սոցիալական ներազդեցության ինկուբատորի փոքր դրամաշնորհներին: Երկու տարի անց Դուք կուտակած կլինեք նորարարական նախագծերի իրականացման հարուստ փորձ, ինչպես նաև Ձեզ համար կբացվեն Ձեր իսկ ձեռնարկումները ֆինանսավորելու հնարավորություններ: Այս ամենը կուղեկցվի Ձեր կողմից գյուղական համայնքների աշակերտների կյանքում ներազդեցություն ունենալու տևական գործընթացով:



* Գործող ուսուցիչների նախաձեռնության շրջանակում հավաքագրված ուսուցիչ-առաջնորդների ամսական աջակցության չափը տարբեր կլինի:

** Գումարները նված են պարտադիր հարկային պահումներից հետո: